ANNUAL REPORT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Տարեկան հաշվետվություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Գյուտեր եւ օգտակար մոդելներ 7

Ապրանքային նշաններ եւ արդյունաբերական նմուշներ 9

Ֆիրմային անվանումներ 11

Տեղեկատվական տեխնոլոգիաներ 12

Լիցենզային եւ զիջման պայմանագրերի գրանցում 13

Իրավական դաշտ 13

Միջազգային համագործակցություն 14

Հրատարակվում է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա Արմեն ԱԶԻԶՅԱՆ
Անդրանիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Մանվել ԲԱԲԱՅԱՆ
Գոհար ԱԴԱՄՅԱՆ
Դիզայն եւ էջատում Նաիրա ԱՆԱՆՅԱՆ

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
Internet: http://www.armpatent.org
E-mail: armpat@cornet.am

© *ՀՀ մտավոր սեփականության գործակալություն*

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալությունը 2003թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների համապատասխան հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաեւ պաշտոնական տեղեկությունների հրապարակման եւ իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

Մեծ ուշադրություն է դարձվել բնագավառի կատարելագործմանը նպատակաուղղված աշխատանքներին, մասնավորապես իրավական դաշտի կատարելագործմանը, ինչպես նաեւ միջազգային համագործակցության ընդլայնման հարցերին:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

2003 թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 155 գյուտի եւ 6 օգտակար մոդելի հայտ, որոնցից 156-ը՝ ազգային հայտատուներից, 5-ը՝ օտարերկրյա հայտատուներից (աղյուսակ 1):

2004 թ. հունվարի 1-ի դրությամբ ստացված գյուտերի եւ օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 1980:

Աղյուսակ 1

Երկիրը	2002	2003
Հայաստան	214	156
Այլ երկրներ	8	5
Ընդամենը	**222**	**161**

2002 թ. համեմատությամբ 2003 թ. ստացված հայտերի ընդհանուր քանակը նվազել է 61-ով կամ 27,5 %-ով, իսկ օտարերկրյա եւ ազգային հայտատուներից ստացված հայտերի հարաբերակցությունը համարյա չի փոփոխվել:

Օտարերկրյա հայտատուներից ստացված 5 հայտերից 2-ը ներկայացվել են Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի (PCT) ընթացակարգով:

Համաձայն Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի (PCT) 2(xv)-րդ եւ 10-րդ հոդվածների եւ պայմանագրին կից Հրահանգի 19-րդ կանոնի Մտավոր սեփականության գործակալությունը, որպես ստացող գերատեսչություն, ընդունում է հայտեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից եւ իրավաբանական անձանցից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանցից: 2003թ. գործակալություն՝ որպես ստացող գերատեսչություն, ներկայացվել է 3 միջազգային հայտ:



A. Մարդու կենսական պահանջմունքների բավարարում
B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
C. Քիմիա, մետաղագործություն
D. Մանածագործություն, թուղթ
E. Շինարարություն, լեռնագործություն
F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ եւ պոմպեր, զենք եւ ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
G. Ֆիզիկա
H. Էլեկտրականություն

Նկ. 1

Այսպիսով, 1994-2003 թ.թ. ժամանակաընթացքում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության միջազգային բյուրո (ԺՆեւ) առաքվել է 34 գյուտի միջազգային հայտ:

Համաձայն Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի 15(1)(ii)-րդ հոդվածի, Մտավոր սեփականության գործակալությունը, որպես ստացող գերատեսչություն, ընդունում է հայտեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից եւ իրավաբանական անձանցից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանցից: 2003թ. գործակալություն՝ որպես ստացող գերատեսչություն, ներկայացվել է 1 հայտ:

Այսպիսով, 1997-2003 թ.թ. ժամանակաընթացքում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել 7 հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն 152 հայտով անցկացվել է նախնական փորձաքննություն եւ որոշում է կայացվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին:

Գործավարությունն ավարտվել է 183 հայտով, ընդ որում՝

- *7 հայտով անցկացվել է ըստ էության փորձաքննություն, որի արդյունքում տրվել է եզրակացություն գյուտի՝ արտոնագրաունակության պայմաններին համապատասխանության վերաբերյալ.*
- *145 հայտով անցկացվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում կայացվել են որոշումներ նախնական արտոնագիր տալու մասին.*
- *7 հայտով կայացվել են որոշումներ հիմնական արտոնագիր տալու մասին.*
- *8 հայտով անցկացվել է փորձաքննություն, որի արդյունքում կայացվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին.*



Նկ. 2

- *3 հայտով կայացվել են որոշումներ արտոնագիր տալը մերժելու մասին.*
- *19 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտի հետկանչման մասին:*
- *1 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի հայտի հետկանչման մասին:*

2003 թ. ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ. 1-ում՝ գրաֆիկների տեսքով:

Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ. 2-ում:

2003թ. տրվել է գյուտի 169 արտոնագիր, օգտակար մոդելի՝ 7:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2003 թվականին ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալությունն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 927 հայտ (որոնցից 693-ը՝ ազգային հայտատուներից) եւ ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 1 հայտ:

870 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում բոլոր հայտերն ընդունվել են քննարկման: Հետ է կանչվել 50 հայտ, իսկ 103 հայտով կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշում: Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել են 602 ապրանքային եւ սպասարկման նշաններ (411-ը՝ ազգային հայտերով), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամների տեսքով բերված է նկ. 3-ում:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի եւ դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2120 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 420, իսկ վերջնական մերժման մասին՝ 316 միջազգային գրանցումներով: Հաշվետու ժամանակաշրջանում կայացվել է ապրանքային նշանների միազգային գրանցումների գիջումները մերժելու մասին 13 որոշում:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:



Նկ. 3

Աղյուսակ 2

Երկիրը	Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի եւ դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
Հայաստան	693	-	693
ԱՄՆ	90	14	104
Ավստրալիա	-	6	6
Ավստրիա	-	24	24
Բենիլյուքս	-	178	178
Բուլղարիա	3	55	58
Գերմանիա	14	494	508
Դանիա	-	14	14
Թուրքիա	1	65	66
Իռլանդիա	2	6	8
Իսպանիա	4	55	59
Իտալիա	-	161	161
Իրան	6	-	6
Լատվիա	-	4	4
Լեհաստան	5	31	36
Լիխտենշտայն	-	25	25
Կորեայի Հանրապետություն	13	3	16
Կուբա	-	5	5
Հնդկաստան	8	-	8
Հունաստան	2	7	9
Հունգարիա	-	41	41
Ղազախստան	-	12	12
Ճապոնիա	12	24	36
Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Թագավորություն	17	34	51
Նիդեռլանդներ	5	-	5
Նորվեգիա	1	7	8
Շվեդիա	-	11	11
Շվեյցարիա	12	219	231
Չեխիա	3	34	37
Չինաստան	2	70	72
Ռումինիա	-	7	7

Ռուսաստանի Դաշնություն	4	206	210
Սինգապուր	6	9	15
Սլովենիա	-	22	22
Ուկրաինա	1	24	25
Ֆինլանդիա	2	2	4
Ֆրանսիա	4	235	239
Այլ երկրներ	17	16	33
Ընդամենը	927	2120	3047

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է նշանի միջազգային գրանցման 1 հայտ:

2002 թ. 388 հայտի դիմաց 2003 թ. ազգային հայտատուներից ստացվել է 693 հայտ, այսինքն ստացված հայտերի քանակն աճել է 305-ով կամ մոտ 79 % -ով:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն նույնպես աճել է եւ՝ ազգային ընթացակարգով (232-ի (2002թ.) դիմաց 234 (2003թ.), եւ՝ Մադրիդյան համաձայնագրի եւ դրա արձանագրության շրջանակներում (1433-ի (2002թ.) դիմաց 2753 (2003թ.):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 23 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 6-ը՝ ազգային հայտատուներից, 11-ը՝ ԱՄՆ-ից, 3-ը՝ ճապոնիայից, 2-ը՝ Իտալիայից, 1-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից): Դրանցից 8-ի համար կայացվել է որոշում արտոնագիր տալու մասին: 2002 թ. համեմատությամբ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է (11-ի (2002թ.) դիմաց 6 (2003թ.)), իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է 13-ով:

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

2003թ. ստացվել է ֆիրմային անվանման գրանցման 3194 հայտ:

Գրանցվել է ընդամենը 3050 անվանում, մերժվել է 144-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի № 289 որոշման, ֆիրմային անվանման մեջ "հայ", "Հայաստան", "հայկական" բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 11 թույլտվություն որը 2002թ. համեմատությամբ 6-ով պակաս է :

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2003 թվականին լազերային սկավառակների վրա հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար՝ № 1 (25), № 2 (26), № 3 (27) եւ № 4 (28): Դրանց մեջ ընդգրկվել են տեղեկություններ 169 գյուտի, 7 օգտակար մոդելի, 12 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 401 գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին, ինչպես նաեւ արտոնագրերի եւ ապրանքային նշանների զիջման պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման մասին (63 գրանցում):

«Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն գյուտի հայտի պաշտոնական հրապարակման եւ համընդհանուր ծանոթացման դնելու նպատակով տպագրվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար:

Հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հրատարակվել է գործակալության 2002թ. տարեկան հաշվետվությունը:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ եւ Հայաստանի ազգային գրադարան եւ ազգային գրապալատ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված ինֆորմացիան:

Նախնական պայմանավորվածությամբ, արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը պաշտոնական տեղեկագրերի 21 օրինակ եւ տարեկան հաշվետվության 23 օրինակ ուղարկել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաեւ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՄՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԱԳ):

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնց 4 համարներում զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 169 գյուտի մասին մատենագիտական տվյալներ: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքները շարունակվում են:

Սկսած 2003 թվականից, գործակալությունը արտոնագրային տեղեկատվություն է ստանում նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, «CISPATENT» սկավառակներով տեղեկատվության փոխանակման շրջանակներում:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության ավտոմատացման եւ տեխնիկական վերազինման աշխատանքները: Գործակալությունը ձեռք է բերել Pentium 4 տեսակի 16 համակարգիչներ եւ համակարգչային օժանդակ սարքեր ու սարքավորումներ, այդ թվում՝ տպիչներ: Գործակալության ծրագրային համակարգի վերազինման նպատակով ձեռք են բերվել նաեւ մի շարք ծրագրային փաթեթներ:

Գործակալության ինտերնետային էջում զետեղվել են «Վիճակագրական տվյալներ»,

«Գյուտերի հրապարակված հայտեր», «Տարեկան հաշվետվություն», «Ձեւաթղթեր», «Բանկային տվյալներ», «Արտոնագրային հավատարմատարներ» եւ «Կոնտակտային ինֆորմացիա» բաժինները: Մուտքի էջին տրվել է գրաֆիկական տեսք, որից ընտրվում է համապատասխան լեզուն:

ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ԵՎ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի եւ Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի համաձայն գործակալությունը շարունակել է լիցենզային պայմանագրերի եւ պահպանական փաստաթղթերի զիջման պայմանագրերի քննարկումն ու գրանցումը:

2003թ. ընթացքում քննարկվել եւ գրանցվել են 68 պայմանագրեր, որոնցից 53-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 14-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին եւ մեկը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին:

Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջեւ:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

2003թ. շարունակվել են Մտավոր սեփականության օբյեկտների պահպանության իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Փոփոխություններ են կատարվել «Արտոնագրերի մասին» եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում:

Առաջարկություններ են նախապատրաստվել «Հեղինակային եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքի ընդունման մասին, որոնք գտնվում են նախնական քննարկումների փուլում:

Առաջարկություններ են նախապատրաստվել նաեւ արդյունաբերական սեփականությանը վերաբերող բազմաթիվ ենթաօրենսդրական ակտերի մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ, որոնք սահմանված կարգով կներկայացվեն նախարարին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության գործակալության միջազգային համագործակցության հիմնական ուղղություններն են՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ) հետ աշխատանքային համագործակցության զարգացումն ու ամրապնդումը, մասնակցությունը տարբեր միջազգային պայմանագրերին եւ համաձայնագրերին, գործակալության մասնագետների որակավորման բարձրացումն օտարերկրյա եւ միջազգային արտոնագրային գերատեսչություններում ուսուցման եւ որակավորման բարձրացման ճանապարհով, ինչպես նաեւ երկկողմ եւ բազմակողմ կապերի զարգացումը ԱՊՀ երկրների ու օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ:

2003 թ. ընթացքում գործակալության 8 մասնագետներ մասնակցել են ՄՄՀԿ աշխատանքային մարմինների առավել կարեւոր նիստերին, ինչպես նաեւ ԵԱԳ կազմակերպած սեմինարներին:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության մասնագետները մասնակցել են Եվրասիական արտոնագրային գերատեսչության (Մոսկվա) տարբեր աշխատանքային խմբերի նիստերին, որտեղ ՀՀ-ի քվոտաների հաշվին աշխատում են գործակալության երեք փորձագետներ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության երկու մասնագետ-փորձագետներ 3 շաբաթով մասնակցել են ժնեւում կազմակերպված փորձագետների ուսուցողական ծրագրին: Ծրագիրը կազմակերպել եւ ֆինանսավորել էր ՄՄՀԿ միջազգային ակադեմիան: